ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
(14 փետրվար, կիրակի)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Տեառնընդառաջը կամ Տերենդեզը մեր ժողովրդի ամենասիրելի տոնակատարումներից մեկն է: Այս հիշատակը կապված է Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի կյանքին հետ: Տեառնընդառաջը հանդիսանում է նրա երկրային կյանքի առաջին կարևոր մեկ եղելությունը, Սուրբ ծնունդից հետո:

Ըստ Հին Կտակարանի մեջ հաստատված կարգի և կանոնի, անդրանիկ մանչ երեխաներին 40-րդ օրը նրա ծնողները տանում էին տաճար և հատուկ արարողությամբ երեխան նկատում էին նվիրված, ընծայված Աստծուն:

Անա այդ ավանդական սովորությամբ նաև Ս. Կույս Մարիամ և Հովսեփ մանուկ Հիսուսին, երբ նա տակավին քառասուն օրեր էր ապրած այս երկրի վրա, տարան տաճար և ուր արարողությունը կատարվեց:

Եվ այդտեղ է, պատմում է Սուրբ Ավետարանը, որ տեղի ունեցավ մի անսպասելի երևույթ: Ծերունի մի քահանա՝ Սիմեոն անունով, Սուրբ Հոգուց ներշնչված, մարգարեացավ և նախատեսեց, ճանաչեց մանուկ Հիսուսի մեջ ապագա փրկիչը մարդկության: Այսպիսով Աստվածահայտնության մի փոքրիկ դրվագ ևս տեղի ունեցավ այդ պահին, երբ Աստվածամայրը և Հովսեփ մանուկ Հիսուսին բերել էին տաճար՝ ընծայելու նրան Աստծո:

Այսօր, սիրելի հավատացյալներ, երջանիկ զուգադիպությամբ, այս սուրբ հիշատակի առիթով, մենք, համաձայն մեր Սուրբ Եկեղեցու կարգաց և կանոնաց, սրբալույս մեռոնի օծմամբ, ձեռնադրեցինք հինգ երիտասարդ վարդապետների և շնորհեցինք նրանց եպիսկոպոսական աստիճան:

Երջանիկ զուգադիպություն եմ ասում Ես, որովհետև այս սրբազան արարողությունը ևս մի տեսակ ընծայում է: Այս երիտասարդ հինգ հայ հոգևորականները, եկած արտասահմանից, հեռավոր երկրներից, տարբեր երկրներից, եկան ծնկաչոք և ուխտ կատարեցին իրենց անձը նվիրաբերելու Աստծուն, մեր Եկեղեցուն, և ծառայելու մինչև իրենց կյանքի վերջը մեր հավատացյալ ժողովրդին, ծառայելու հավատարմությամբ, ուխտապահությամբ և հոգեշեն գործերով, եպիսկոպոսական բարձր իշխանությամբ:

Ինչպես հայտնի է ձեզ, հոգևորականաց դասակարգումի մեջ եպիսկոպոսական աստիճանը ամենաբարձր աստիճանն է, հոգևոր-կանոնական իմաստով ու նաև վարչա-կազմակերպչական տեսակետից:

Մեր հինգ նորապսակ եպիսկոպոսները պիտի վերադառնան իրենց երկրները և վերատեսուչը պիտի լինեն, այսինքն եպիսկոպոսը այն համայնքների և եկեղեցիների, որ հանձնված է նրանց: Եվ մեր հինգ այս եպիսկոպոսները անծանոթ հոգևորականներ չեն, նրանք տասը և ավելի տարիներ ի վեր արդեն պատասխանատու հովվական աշխատանք են կատարում տարբեր երկրներում: Բոլոր հինգն էլ հավատավոր հոգիներ են, նվիրված են մեր Սուրբ Եկեղեցուն, հավատարիմ են մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու հայրենասիրական զգացմունքներով էլ տոգորված:

Այսօր մեր աղոթքներով, մեր երգեցողությամբ, մեր խունկով և լույսերով և սրբալույս մեռոնի օծմամբ ու ձեռնադրությամբ սրբազան մի արարողություն կատարեցինք, որով հայցեցինք աստվածային շնորհները մեր նորապսակ եպիսկոպոսներին: Նրանք արդեն քահանայական ձեռնադրություն ստացել էին ժամանակին, բայց այսօր վերստին վերանորոգեցինք մեր աղոթքները, որպեսզի այդ շնորհները լիությամբ վերստին նրանց բաշխվեն, և նրանք լիացած, զորացած, պայծառակերպված, հոգեպես վերանորոգված, վերածնված պիտի ասեմ Ես, նոր եռանդով, նոր ոգեշնչումով վերադառնան իրենց երկրները և հովվեն, առաջնորդեն, մեկ և անբաժան պահպանեն մեր պանդուխտ հայ ժողովուրդը:

Այսօր, սիրելի հայաստանցիներ, արտասահմանում ապրում են ավելի քան երկու միլիոն ձեր քույրերից և եղբայրներից: Մենք՝ հայաստանցիներս, նրանց նկատում ենք անբաժանելի մասը, հարազատ մասը Մայր Հայաստանի, հայրենաբնակ մեր ժողովրդի զանգվածի: Տարբերություններ այլ տեսակետներից կարող են լինել, բայց դրանք երկրորդական ենք նկատում մենք և ժամանակավոր ու անցավոր: Ամեն բանից վեր մենք հայ քրիստոնյաներ ենք, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով բոցավառված, Արարատով ոգեշնչված և մեր ժողովրդի ապագայով մտահոգված և միշտ պատրաստ ծառայելու մեր ժողովրդին և նպաստելու մեր ազգի և հայրենիքի հառաջընթացքին ու վերելքին և մանավանդ պայծառացնելու մեր առաքելական Ս. Եկեղեցին, որ հարազատ Մայր Եկեղեցին է, միակ հայկական հարազատ Եկեղեցին համայն հայության:

Ահա այս ոգեշնչումով, կարծում եմ, դուք, սիրելի սրբազան եղբայրներ, պիտի վերադառնաք ձեր երկրները: Տարեք բոլորին Մեր հայրական սիրո ողջույնը, Մեր հայրապետական օրհնությունը, տարեք նաև ողջույնը մեր վերածնված մայր հայրենիքի:

Հիշեցի, թե դուք հիմա հոգևոր գերագույն իշխանությամբ կվերադառնաք և միշտ այդ իշխանության տերը պիտի կանգնեք ձեր ողջ գործունեության ընթացքին: Բայց երբ կխոսիմ իշխանության մասին, կուզեմ հիշել այստեղ մեր Տիրոջ՝ Հիսուսի երկու պատվիրանները, որ «Ով ձեր մեջ ուզում է մեծ լինել, թող լինի ձեզ սպասավոր»: Այդ ոգով է, որ մենք ըմբռնում ենք հոգևոր-եկեղեցական կյանքի մեջ իշխանության գաղափարը, իշխանության հեղինակությունը: Մեծ լինել, առաջնորդ լինել, կնշանակի սպասավոր լինել ժողովրդին: Նույնպես Հիսուսի խոսքերից, որ ասել է. «Ես եկա աշխարհ ոչ թե պաշտոն առնելու համար, այլ պաշտելու համար»: Այսինքն՝ ես աշխարհ եկա ոչ թե մեծավոր լինելու, իշխանավոր դառնալու, պաշտոններ ունենալու, այլ եկա պաշտելու, այսինքն ծառայելու:

Ես այս սրբազան պահին այս հորդորը, Սուրբ Ավետարանի այդ պատվիրանը ուզում եմ ձեզ հիշեցնել: Ձեզ ուզում եմ հոգվո և մարմնո լիակատար քաջառողջություն, մշտանորոգ ներշնչանքի ուժեր: Մաղթում եմ նաև, որ Ս. Էջմիածնից այսօր ձեր վրա իջած շնորհները պահեք-պահպանեք սրբությամբ, ամեցնեք զանոնք ձեր հոգիների ավազանի մեջ, ավելի և ավելի արժեվորելով զանոնք ձեր առաքելության ճանապարհին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»: